



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Հավատարմագրման ազգային մարմին»

ՊՈԱԿ-ի տնօրեն

Ա. Օրոսյան

(անուն, ազգանուն)

«13» հունիսի 2024 թ.

N 1-4 հրաման

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065-2013 ՍՏԱՆԴԱՐՏԻՑ

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17020-2013 ՍՏԱՆԴԱՐՏԻՆ

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆ

ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

P-01-01

ՄՇԱԿԵԼ Է

Կառավարման համակարգի մենեջեր

Նազիկ Աբգարյան

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Գործարկման թվականը 13.06.2024թ.

Երևան 2024

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065-2013 ՍՏԱՆԴԱՐՏԻՑ

ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17020-2013 ՍՏԱՆԴԱՐՏԻՆ

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հայաստանի Հանրապետության «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի «Հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննության անցկացման կարգի մասին» N 765-Ն որոշման 2-րդ կետի համաձայն հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմինները:

2. Մինչ ՀՀ կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 765-Ն որոշման մեջ փոփոխությունների (2-րդ կետը փոփ. 07.03.2024 N 312-Ն) կատարումը՝ հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննությունն իրականացվում էին ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065-2013 ստանդարտով հավատարմագրված արտադրանքի սերտիֆիկացման մարմինների կողմից: Սակայն ՀՀ կառավարության 07.03.24թ.-ի N 312-Ն որոշման համաձայն «սերտիֆիկացման մարմին» բառերը փոխարինվել է «համապատասխանության գնահատման մարմիններ» բառերով:

3. Ուսումնասիրելով «Հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննության անցկացման կարգը» «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը սույն քաղաքանությամբ հայտարարում է, որ **13.06.2024թ.**-ից հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննությունն

իրականացնող կազմակերպություններին հավատարմագրել **ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17020-2013** ստանդարտի պահանջներին համապատասխան:

4. **ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065-2013** ստանդարտով հավատարմագրված հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննությունն իրականացնող համապատասխանության գնահատման մարմինների (այսուհետ՝ ՀԳՄ) հավատարմագրումը կգործի մինչև հավատարմագրման վկայագրի գործողության ավարտը:

5. **ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065-2013** ստանդարտով հավատարմագրված ՀԳՄ-ները վերահավատարմագրման հայտ չեն կարող ներկայացնել: Վերջիններս ներկայացնելու առաջին անգամ հավատարմագրման հայտ՝ **ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17020-2013** ստանդարտին համապատասխան:

6. Սույն քաղաքականության վերանայումը կատարվում է ըստ անհրաժեշտության: